600.0351.18.09.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

18 սեպտեմբերի 2019 թվականի №351Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի №248Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2017 թվականի հունիսի 21-ի №274Ա որոշմամբ կասեցվել է «ԱՄՐԻՏԱՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) «Գնդեվանք-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0594 լիցենզիայի (այսուհետ՝ ԼԷ №0594) գործողությունը՝ մինչև «Գնդեվանք-1» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման նպատակով 2016 թվականի հունվարի 13-ին Ընկերությանը տրամադրված №000002 ջրօգտագործման թույլտվության կասեցման վերացումը, բայց ոչ ավելի քան ԼԷ №0594 լիցենզիայի կառուցման ժամանակահատվածի ավարտը՝ մինչև 2019 թվականի օգոստոսի 31-ը,

բ) Հանձնաժողովը 2019 թվականի օգոստոսի 23-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ «Էներգետիկայի մասին» օրենքի 30.1 հոդվածի 2-րդ մասի «գ» կետի հիմքով ԼԷ №0594 լիցենզիայի գործողությունը դադարեցնելու հարցի քննարկման նպատակով, որի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2019 թվականի օգոստոսի 23 №ՍՇ/2.3-63/2149-19 գրությամբ,

գ) «Էներգետիկայի մասին» օրենքի 30.1 հոդվածի 2-րդ մասի «գ» կետի համաձայն՝ Լիցենզավորված անձի գործունեության լիցենզիան կարող է դադարեցվել, եթե արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման)

ժամանակահատվածում Հանձնաժողովը կասեցրել է արտադրության լիցենզիան, և արտադրության լիցենզիա ունեցող անձը մինչև կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածի ավարտը չի վերացրել արտադրության լիցենզիայի կասեցման համար հիմք հանդիսացած խախտումը, Հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր, և Հանձնաժողովը չի վերացրել արտադրության լիցենզիայի կասեցումը,

դ) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը որևէ հիմնավորում կամ փաստարկ չի ներկայացրել,

ե) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարն ամբողջությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե որոշում է ընդունել արտադրության լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին,

զ) իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Ընկերությունը մինչև ԼԷ №0594 լիցենզիայով ամրարգված կառուցման ժամանակահատվածի ավարտը չի վերացրել ԼԷ №0594 լիցենզիայի կասեցման պատճառը, Հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր, և Հանձնաժողովը չի վերացրել ԼԷ №0594 լիցենզիայի կասեցումը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30.1 հոդվածի 2-րդ մասի «զ» կետը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2016 թվականի օգոստոսի 31-ի «ԱՄՐԻՏԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Գնդեվանք-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №248Ա որոշումը:
2. Ընկերությանը՝
   1) «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի հուլիսի 22-ի №652-5788 գրությամբ Հանձնաժողով ներկայացված №ՊԲԵՆ16/82-01 երաշխիքի

համաձայն երաշխավորված 4,102,500 (չորս միլիոն հարյուր երկու հազար հինգ հարյուր) դրամը մինչև 2019 թվականի հոկտեմբերի 18-ը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով, կամ այն ստանալու պահից 15 օրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
18 սեպտեմբերի 2019թ.